

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍԻ հայ կանանց Բարեգործական ընկերության վարչությունից ստացանք հետևեալ նամակը: «Թիֆլիսի հայուհեաց Բարեգործական ընկերության վարչությունը խնդրում է ձեզ ընդունաւ իր խորին շնորհակալութիւնը ձեր ցոյց տուած համակրութեան համար դէպի ընկերութիւնը և ձեր թերթի մէջ ընկերութեան ժողովների մասին մի քանի անգամ յայտարարելու համար: Կը բարեհաճէիք, արդեօք, ձեզ մօտ ստորագրութիւն ընդունել, թէ Թիֆլիսում և թէ օտար քաղաքներում բնակվող յարգելի տիկնանց հասարակութեան այն անձինքներին, որոնք ընկերութեանը անդամակցել են ցանկանում: Ձեր յիշած կանդիդատներին թուում, մոռացել էիք յիշել տիկին Կատարինէ Բէհրեմյանցին: Ինչպէս չէի զիջում, որ քանի որ ինչքան էլ սրտով համակրէիք նրանց նորարաց ընկերութեանը, այնու ամենայնիւ ժամանակի պակասութեան պատճառով մեզ անհնարին է «Մշակի» էջերում ստորագրութիւն բանալ այդ ընկերութեան անդամական վճարները ընդունելու համար: Խնդրում ենք մեր յարգելի տիկիններին ներողամիտ գտնվել դէպի մեր ակամայ մերժումը: Մեր ստացած նամակը ստորագրել էին ատենապետուհի տ. Սարգսի Ներիցեան և ատենադպիր տ. Մարիամ Խոսրովան:

ՆՈՒՅՈՒՅՑ մեզ գրում են որ այդտեղի մի հայ երիտասարդ փայտեայ մուրճով իր կնոջ գլխին մի անգամ խփելով, սպանել է նրան:

Մեզ գրում են Վարդաշէնից որ պ. Գ. Խօջա-միրեանց վերջացրել է Ֆօն-Վիլիլի «Недоросль» (Անշտախա) գրուածքը թարգմանութիւնը և շուտով կը վերջացնի և Ֆրանց Զօֆմանի «Պատումներ մանուկների համար, հինգ տարեկան հասակից մինչև ութ տարեկան հասակը»:

Ստացանք պ. Համբարձում Առաքելեանցից մի ընդարձակ յօդուած, որով պարտք պատասխանում է «Արձագանք» շաբաթականի մէջ իր դէմ գրված «Մի վնասակար միջոց» յօդուածին: Մենք երբեք չենք խուսափում այնպիսի բանակութիւններից, որոնց գլխավոր նպատակն է մի պրինցիպ, մի սկզբունք բացատրելու և պարզելու, բայց մեր տաս տարեկան գործունէութեան ընթացքում միշտ խուսափել ենք այնպիսի բանակութիւններից, որոնք հիմք ունենալով ոչ թէ սկզբունք, պրինցիպ, գաղափար, այլ անհատական տեսակետ այս կամ այն մասնաւոր հանդամանքի վրա, միշտ անվերջանալի և ազարդուն են լինում: Այդ պատճառով ներողութիւն ենք խնդրում մեր բարեկամ պ. Առաքելեանցից, եթէ նրա յօդուածը չենք կարող ապաւրել:

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ բարեգործական ընկերութիւնը վճռել է մի յայտնի գումար դրժնել իր հաշուով հայ երիտասարդներից մի քանի մշտական ստիպենդիստներ պահել տեղիս գիմնազիաներում:

ԲԱԹՈՒՄԻՅ մեզ գրում են որ պ. Ներսիսեան, որ Ամերիկայից է եկել ներկայացումներ տալու համար և ցոյց տալու ամերիկական այլ և այլ նորագիտ գործիքներ, Բաթում եղած ժամանակն էլ մի քանի ներկայացումներ տուեց, որոնցից մինը տեղիս հայոց դպրոցի օգտին: Այդ ներկայացումը գոյացաւ 70 ռուբլի չափ, որ և յանձնվեցաւ դպրոցի հոգաբարձութեանը:

Պ. Ներսիսեան շուտով տալու է մի ներկայացում Թիֆլիսում, Արժրուտու թատրոնում:

ՄԵՏ-ՎԱՐԱՔԵԼԻՍԻՅ մեզ գրում են հետևեալը: «Ձեր լրագրի № 30 մէջ զիջ տակ գետեղված պ. Մառանկովեանի յօդուածը այնքան վեղեցիկ և անաչառ էր գրված, այնքան լաւ էր նկարագրում մեր գիւղացիների կեանքը, գիւղական դատարների և իշխանաւորների գործունէութիւնը, որ արժէ հաւաքել ժողովուրդը և կարդալ նրա առաջ այդ յօդուածը: Մի և նոյն բաներ, որոնք նկարագրված էին յիշեալ յօդուածում, առանց բացառութեան, ամեն օր, ամեն բոլոր կրկնում են և մեր կողմերում: Ժողովուրդը, երկրագործը, աղքատ ամբողջ կատարեալ գերի է իր

տգիտութեան, իր տեղական իշխանաւորների և վախառուների ձեռքում, ուստի անպաշտպան և անօգնական է ամեն դէպքում»:

Մի զարմանալի, անբացատրելի անստորագրել նամակ ենք ստացել Թիֆլիսի քաղաքային փոստով: Գտնվում էր արձանի դիմաց գտնվող տների մէջ, Վ. օրօնցովի արձանի դիմաց գտնվող տների մէջ, անձինք, կասկածված լինելով թէ նրանք են կրակ գցել յիշեալ տները, բայց նրանք արդար են, աւելացնում է անստորագրել նամակը, «այլ կրակ գցողները մենք ենք»: Իսկ ո՞վ է այդ «մենք» նա-տալի տակ մի քանի տուռեր կան միայն, և նրանց տակ գրված է «վեց հոգի»:

Մի և նոյն ժամանակ անանուն նամակագիրները խմբագրին այլ և այլ սպառնալիքներ են անում, եթէ Լուրը չը տը-պենք:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍ
«ГОЛОСЪ» լրագրի թղթակիցը գրում է Լօնդոնից մարտի 10-ից հետեւեալը: Անցեալ շաբաթվայ պարլամենտական վիճաբանութիւնները բաւական հետաքրքիր էին: Ձր նայելով համայնքների ժողովի հրէայ անդամների խորհուրդներին, բարձր Ուօրմն առաջարկեց ժողովին ցանկութիւն յայտնել որ անգլիական կառավարութիւնը միջնորդէ ուսաց կառավարութեան առաջ ուսա-հպատակ հրէաների համար: Գլադստօն, այդ առաջարկութիւնը անտեղի և անիրա-գործելի համարելով յայտնեց, որ հակա-հրէական շարժման ժամանակ Ռուսաստանի մէջ այնպիսի անգութ գործքեր են կատարված, որոնք ամբողջի են ոչ թէ միայն Ռուսաստանի, այլ և ամբողջ մարդկութեան պատմութեան համար, մանաւանդ որ այդ գործքերը կատարված են քրիստոնէաներից: Այնու ամենայնիւ Գլադստօն չէ կասկա-ծում, որ Ռուսաց կայսրը և նրա կառավա-րութիւնը այդ շարագործութիւններին այն-պէս են վերաբերվում, ինչպէս ամբողջ Անգ-լիան: Առաջին միտնալը ասեց, որ անգ-լիական կառավարութիւնը մանրամասն տե-ղեկութիւններ չունի Ռուսաստանի մէջ կա-տարված հակահրէական հալածանքների մասին և միջազգային իրաւունքի հիման վրա առիթ չունի յանձնել իր գործակա-տարներին, որ նրանք այդ առարկային վե-րաբերեալ փաստեր հաւաքեն և նրանց ըս-տուզեն: Գլադստօն համաձայնեց, որ մի-ջազգային իրաւունքը բաւական շատ պա-կասութիւններ ունի և խոստովանեց մա-մուլի օգտակար ազդեցութիւնը այդ գործի վրա: Նրա կարծիքով մամուլը արտայայտում է հասարակական կարծիքը և մի և նոյն ժամանակ պաշտօնական պատասխանատու-թեան չէ ենթարկված: Այս դէպքում անգ-լիական մամուլի դրութիւնը աւելի լա-ւ էր, քան թէ անգլիական կառավարութեան և նրա հաւատարմատարների դրութիւնը: Մամուլը կարող էր հաւատացած լինել, որ նրա առաջարկութիւնների վրա առանց կասկածի կը նայէին: Համայնքների ժողովի անդամները մի քանիսի ակնարկութիւններին, որ Գլադստօն միջնորդեց յիսուներորդ թուականների վերջը յօդուած իրաւա-կան ազդանքներին, նա պատասխանեց, որ այդ միջնորդութիւնները անաշուղ անցան: Գլադստօն աւելացրեց, որ այն ժամանակվայ միջնորդութիւնը պարլամենտական վճռի ձե-լուն էր: Վերջը Գլադստօն յոյս յայտնեց, որ ուսաց կառավարութիւնը գործ կը դնէ իրանից կանխած բոլոր միջոցները ապա-հայում այդպիսի ցաւալի անցքերի առաջն առնելու համար: Բարձր Ուօրմն յետ առա-ւել իր առաջարկութիւնը, երբ արտաքին գոր-

ծերի միտնալը օգնական ջարդ Դիլի յայտ-նեց, որ Վիկտորիա Թագուհուն դեսպաննե-րին երբեմն աշնդվում է մասնաւոր յարա-բերութիւնների օգնութեամբ օտար կառա-վարութիւնների հետ հասնել բարեշնորհ հետեւանքների, երբ հարցը ամբողջ մարդ-կութեան ընդհանուր բարօրութեան մասին է, մինչդեռ այդպիսի հարցերը անյարմար է դիպլոմատիական պաշտօնական բանակցու-թիւնների առարկայ դարձնել:

Որովհետեւ Բրեդօն նորից ընտրվեցաւ Նորդս-դեմպտօնի ներկայացուցիչ, համայնքների ժողովը ստիպված էր մարտի 6-ին նորից զբաղվել նրա անձնաւորութեամբ: Ստաֆ-ֆորդ Նորդսթոմ դարձեալ առաջարկեց թոյլ չը տալ Բրեդօնի պարլամենտական երդում տալ: Այդ առիթով համայնքների ժողովի անդամները մէկը առաջարկեց պարլամեն-տական կանոնադրութիւնը այնպէս փոփո-խել, որ ապագայում ժողովի իւրաքանչիւր անդամ իրաւունք ունենայ երգվել կամ մի-այն պատուաւոր խօսք տալ: Այս առաջար-կութիւնը պաշտպանեցին բոլոր ազատամիտ-ները, միայն մի քանի բացառութեամբ: Բա-ցի այդ պարլամենտի անդամներից մի քա-նիսը կարծիք յայտնեցին, որ անցել են այն ժամանակները, երբ քննում էին պարլամեն-տի անդամների կրօնական համոզմունքները: Երեւի այդպիսի համոզմունքի կը լինի պար-լամենտի մեծամասնութիւնը եթէ ոչ այժմ, գոնեա մի քանի ժամանակից յետոյ:

Պարլամենտական ներկայ շրջանի օրէնս-դրական գործունէութեանը բաւական շատ վնասեց Գլադստօնի առաջարկութիւնը լոր-դերի ժողովի գործունէութեանը պախարա-կում յայտնելու մասին: Այդ առաջարկու-թիւնը քննվեցաւ մի քանի նիստերի ժա-մանակ, որոնց կարելի էր աւելի օգտաւէտ հարցերի նուերել և ընդունվեցաւ ընդա-մենը 68 ձայներով մեծամասնութեամբ: Միւս կողմից լորդերի ժողովի նշանակած մասնա-ժողովը արդէն սկսել է քննութիւն կատա-րել իրլանդական կալուածական օրէնքի գոր-ծադրութեան մասին: Հասկանալի է, որ կա-ռավարութիւնը ոչ մի կերպ չէ օգնում այդ մասնաժողովին: Իրլանդական գործերի մի-տնալը Ֆորստեր անցեալ շաբաթ այցելեց իրլանդական ամենամահաճութեամբ օրէնքի գործադ-րութեանը: Որտեղ խառնվելով ամբողջ մէջ, նա հասարակ և հասկանալի խօսքերով բացատ-րում էր ժողովըին կառավարութեան իւ-կական նպատակները և ցանկութիւնները: Այդ ճանապարհորդութիւնը շատ լաւ տը-պաւորութիւն գործեց: Գլադստօն և Բրայտ մարտի 6-ին Ուիլիզգորի մէջ ներկայացան Վիկտորիա Թագուհուն և բացատրեցին նը-րան այն վնասը, որ կարող է հասցնել լոր-դերի ժողովի նշանակած մասնաժողովը իր-լանդական կալուածական օրէնքի գործադ-րութեանը:

Այստեղ կարծում են, որ աւստրիական կառավարութիւնը համոզվել է, թէ ան-հրաժեշտ է որքան կարելի է շուտ վերջաց-նել հերցեգովինցիների ապստամբութիւնը և որ այդ պատճառով աւստրիական զօրքե-րը այսուհետեւ եռանդով կը գործեն: Գենե-րալ Վիլհելմի ճառերը Անգլիայի մէջ մեծ ապաւորութիւն գործեցին: Թէ անգլիական քաղաքական շրջանները և թէ նրանք, որոնք անձամբ ճանաչում են Վիլհելմին իբրեւ-քաջ զինեալի, համոզված են, որ նա չէր կարող այդպէս համարձակ խօսել իր հայ-րենիքի պաշտօնական քաղաքականութեան դէմ, եթէ յոյս չունենար հզօր պաշտպա-նութեան վրա:

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 3 մարտի 1882

Գարձեալ սովեւոց հուշակաւոր մասնաժողովին վրայ պէտք է խօսեմ այսօր, վառ դի ամեն կողմ տարածուած զրոյցներն այնքան զայթակղական են դայն կազմող անձանց վարմունքին վրայ՝ որ պէտք է վերջապէս ճշմարտութիւնը երևան եկնէ և զան այդ պարտնները փաստերով, թուանշան-ներով ապացուցանեն առաջի հասարակութեան որ ամբողջ մէկ ազգ, բազմաթիւ օտարազգիք, խաբ-դախ և ստասաց մարդոց չեն հաւատացել իրենց փողերը:

Այս տեղի լրագրաց ընդհանուր լուրքիւնը այդ հաշիւներու մասին, վստահացուցիչ նշան մը է: Ոմանց բարեկամարար տուած խրատներուն ան-լսելի ըլլալը, «Մշակի» քանկոց ըրած մեղմ հրա-ւերները, կարող չեղան համոզել Ունջեան, Կիւլ-պէնեան և ընկերը, որ իրենց վրայ պտտած ան-հաճելի լուրերը պէտք է փութան ժխտել: Անհա-ւատարիմ պաշտօնեայ մը միայն կաշխատի մոռա-ցութեան տալ իրեն յանձնուած գումարներուն համարատուութիւնը: Քանի որ այդ պարտները լուր կը մնան, բնաւ պատճառ մը չիկայ որ մենք ալ չի հաւատանք պտտուած զեղծմաներուն ճշ-մարտութեանը:

«Մշակի» յառաջագոյն ըրած հրաւերներն երեկ զայրոյթ են պատճառած այս մասնաժողովի ան-դամներուն, զիտաւորապէս արխատօկրատութիւն ձեռնդող թրքախօս Ունջեանի, որ կը քնայ ամեն կողմ անկող թէ «մասնաժողովը հաշիւ չունի տալու. ու քաբ թէ քէք մարդոց և թէ միայն երկու իշխանութիւնը կան որ իրաւունք ունին ի-րենցմէ հաշիւ պահանջելու»: Այդ իշխանութիւն-ներն են եղեր Կ. Պօլսոյ Ազգային ժողովը և էջ-միաձայն կաթողիկոսը: Ազգային ժողով չիկայ, ըլլայ անգամ, անցած քաջած բանը ինդիլ չընէր-իսկ էջմիաձայն կաթողիկոսն մէջ չէ այս մասին. ըսել է, պ. Ունջեանի յայտ ըրած սկզբունքին նայելով, մենք հաշիւ տեսնելիք չունենք մինչև ի կատարած աշխարհի:

Միթէ այդ կոմանդիլ ընկերութիւնը ազգային գործ մը կուտած է անօրինելու, թէ մօնօպօլ է ըրած ազգին միմադուար նուէրները ըստ քանց գործածելու: Եթէ մասնաժողով մ'է ազգին կար-գուած, ինչ լրբութիւն է այդքան երկար ատեն պահել իրեն հաշիւները: Եթէ մօնօպօլ մ'է, թող խոստովանին բացարձակ, որպէս զի մենք ալ զիտ-նանք թէ յիմարի պէս մեր փողերը չորթել ենք տուել և միթիթալուինք: Ուրիշ անգամի համար գոնէ խրատուած կըլլանք:

Մասնաժողովին անդամները կերթան առ ու ան խաբելու թէ, տակաւին հաշիւ չեն կարող տալ վասն զի Հայաստանի մէջ իրենց գործառնութիւ-նը գեռ չէ աւարտած, և իր թէ խորամանկ ազ-գասէրներ, ասոր ու անոր ականջին չեն գիտեք ինչ չինծու և խաբեայ վէպեր կը փափսան խոր-հրդապահութիւն խնդրելով: Մասնաժողովը ս ո-վ և ց համար հաստատուած է 18 ամիս է որ դադարած է այդ ուղը: Թող նախ այդ հաշիւը տան մեզի, յետոյ կը տեսնենք թէ յաւելցած փո-ղորովը հարկ է ուրիշ բարեգործական ձեռնար-կութիւններով պարտպել, և թէ այդ պարտները դարձեալ յարմար կը դատենք այսպիսի պաշտօն-ներ վարելու համար:

Ձայն կը տարածին որ Հայաստանի մէջ հոճ-տեր և ալժեր կը յազարկին միշտ: Ի՞նչ քանա-կութեամբ և ինչ թուով, այդ ոչ զքի յայտնի է, իրենք են միայն այդ բանը գիտցողը և իրենք միայն կարող են գիտնալ, վասն զի ստութիւն է այդ, գոնէ ձրիապէս յուրարկուելին բաւական քանակութեամբ: Սովի ժամանակ անգամ Վանայ և ուրիշ զիտաւոր կեդրոններում տեղական մաս-նաժողովների անդամ համարաւանները, սովականե-րուն ուսուստին վրայ speculation կընէին և կենտ-րօնական մասնաժողովը չառ լաւ տեղեակ էր այդ բանին: Ինչու սա գործը ծածկեց եթէ ինքն ալ անոնց մեղաւկից չէր: Ո՞վ կերպախառն մեղ ու-րեմն, որ գլխաւորապէս Ունջեան և Կիւլպէնեան, որք փոքր Ասիոյ հետ մասնաւոր առուստուր կը-նեն, մարդասիրական գործ մը իրենց պատրուակ չեն ըրած հիմայ, և իրենց մասնաւոր հաշիւն և շահուն համար չեն գործածեք ձեռքերնին գտնուած դրամները:

Եթէ սովին վերջանալէն յետոյ, անոր կրկին դարձը արգելելու համար կաշխատեն, ինչպէս կը պարծենան չղքեաններուն մէջ, ո՞վ տուա իրենց այդ արտօնութիւնը և ինչպէս գիտնալու է որ այդ

